

ՊԱՅՄԱՆՔ

Հարկանքի վճարումը 10 ՄԶ.
Հաշվառաց 12
Վերադարձված 5
Հաշվառաց 6
Ընդամենը 21/21
Համաձայն արձանագրության համար 3 զուգահեռ, երկու անգամից հաժար 2 ցույց է առնել անգամներու համար զատ սակարկութիւն կըլայ :
Երաքանչիւր թիւ 40 փարա արծա :



ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գնացած յուրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խմբագրութեան
— Տնօրէնին տիրաւորութիւն, զայս
թիւ Սանտրոքըլար ճառարկութիւն
198, Նոթո խան, Մասիսի գրասեն
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա
մակ չընդունուիր :
Չարուած նամակ, յողուած, և
ետ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գարատաղի խնդիրը վերջացած
չէ : Բ. Գուրս իւր պատասխանը դը
կեց դեռ պահանջ, և կը հաստատէ թէ
պայմանագրին գործադրութեան հա
մար պէտք եղած հրահանգները առ
ւած էր Շքոտրայի կուսակալին, թէ
սխալման մը միայն պատճառաւ : Ու
մանեան զօրաց մեկնելու լուրն եօթն
թամ առաջ հասած էր Բոսթօրիցա, և
փոխանակ 24 ժամու, թէ Գարատաղ
յիներուն իրենց արուած գիրքերը
չկրնալ գրաւելուն պատճառն Օսման
եան պաշտօնատարաց կամքն անկախ
պարագաներէ ծագում առած է : Բ.
Գուրս այս պատասխանն առ ժամա
նակեալ է, և Շքոտրայի լիովին առ
դեկութիւն առնել յետոյ իւր վերջնա
կան որոշումները պիտի ծանուցանէ
եղեր :

Միւս կողմէն մայրաքաղաքիս Գա
րատաղի դեռ պահանջ Բ. Բոսթօրի
Բ. Գուրս ծանուցադիր մը առաւ, որոյ
մէջ Օսմանեան զօրաց մեկնելուն պա
րագայները կը յայտնէ : Ապրիլ 11 ին
Շքոտրայի կուսակալին մի թիկնա
պահ ժամ 9 ին՝ ըստ Եւրոպացւոյ
լուր բերած էր Բոսթօրիցայի Գարա
տաղի հրամանատարին թէ Օսման
եան ժամը 4 ին պիտի մեկնին : Գա
րատաղի հրամանատարը բողոքեց,
քանզի՝ ըստ պայմանագրին՝ 24 ժամ
առաջ իմաց տալ պէտք էր, և 7 ժա
մը չէր բաւեր նշանակեալ գիրքերը
գրաւելու : Նկատողութեան արժա
նի է որ Բ. Գուրս ծանուցադիրը կը
սէ թէ Գարատաղի հրամանատարը
ընաւ դիտողութիւն չէ ըրած, մինչ
դեռ Գարատաղի ծանուցադիրը կը
պնդէ թէ բողոքած է : Այս կարեւոր
կէտին վրայ երկու կողման յայտա
բարութիւնները տարբեր են, սակայն
Բ. Գուրս ծանուցադիրը չձգեց թէ
« սխալման » մը պատճառաւ, փոխա
նակ 24 ժամու 7 ժամ առաջ ծանուց
ուած էր Օսմանեան զօրաց մեկնելը :

Գարատաղի ծանուցադիրը կը յա
րէ թէ Բոսթօրիցայի հրամանատարն
Օսմանեան զօրաց մեկնելու մասին
համաձայնելու և անպատեհութեանց
առաջին առնելու նպատակաւ կուգէր
սպայ մը զրկել Օսման փաշային : Այս
Օսման փաշան նոյնն է՝ որոյ համար
կ'ըսուի թէ Ալպանիացւոյ գլուխն ան
ցած է, և որ պաշտօնակալ եղած էր,
այսու ամենայնիւ Գարատաղի տըր
ւելքը գիրքերը պարպելու պաշտօնն
իրեն յանձնուած էր : Պատմութեան
մնացորդն յայտնի է : Գարատաղի
կը յառաջանան, և Օսմանեան զօրը
մեկնած՝ բայց անոնց տեղ Ալպանիա
ցիներն հաստատուած կը սենսեն :
Գարատաղիք առանց կռուի չէին

կրնար անցնիլ 25 մ գետին վրայի կա
մուրջէն : Գարատաղ կը դանդաղ
այս իրողութիւնը պայմանագրու
թեան դէմ են : Ներքեալ իշխանն ի
մացած էր իրաց ընթացքը : սակայն
վստահ լինելով Բ. Գուրս անկեղծու
թեանը վրայ, չէր ուզած չափազանց
կարեւորութիւն տալ իւր առած տե
ղեկութեանց : իշխանն հրամայեց է որ
իրեն կանոնադրապէս յանձնելի ամ
րութեանց և գիրքերուն վրայ Գա
րատաղի զօրաց կողմէն յարձակում
չլինի, հետեւաբար Գարատաղիք կանգ
առեր են և կռուի պիտի դուռնա
նան :

Այս վերջին յայտարարութիւնը
սուտ կը հանէ տեղական լրագրաց ու
մանց այն զրոյցը թէ Գարատաղ զի
նու զօրութեան պիտի դիմէ : Ընդ
հակառակն կ'երեւի որ իշխանն զգու
շութիւնն ու խոհեմութիւնը ձեռքէ
ձգած չէ, ըստ թրում հրամայած է
իւր զօրաց որ կռու չ'ընեն : Հար
կաւ այս հրամանն յարձակում չ'վա
նելու համար չ'կրնար լինիլ, և երբ
Ալպանիացիք յարձակին, Գարատաղ
յիք իրենք գիրքեր պիտի պաշտպա
նեն, Այս կերպիւ կռիւներ եղած են
ոչ միայն Ալպանիացւոյ և Գարա
տաղցոյ, այլ և քառաջնոց և Օսման
եան կանոնադր զօրաց միջեւ, որ
կուգէին Ալպանիացիներն արդելու
Գարատաղի սահմանն երթալէ : Հե
տեւաբար Ալպանիական խնդիրը նոր
կարեւորութիւն կ'առնու : Տէրու
թեանց դեռ պահանջը պահանջելին որ
Բ. Գուրս այն գիրքերը նորէն գրա
ւէ իւր զօրք և Գարատաղի յանձնէ
իսկ թուրք լրագիրք փափաք կը յայտ
նեն որ մէկ երկու Եւրոպական տե
լութիւնք Սուրիոյ գէպքին ժամա
նակ եղածին նման զօրք զրկեն, իւ
պանիացւոց զրաւած տեղերն իրենք
ես առնելով յանձնեն Գարատա
ղի : Բայց այս բողոքներն իմաս
տուն չ'կրնար համարուիլ, քանզի ե
թէ այն ատեն գիտուածով Եւրոպա
կան զինուոր մ'ապանուի, Եւրոպա
կան տէրութիւնը արեւն թափեցինք
ըսելով հաւանական է որ ծանր լին
դիրներ հանեն :

Ալպանիական խնդիրն ուրիշ վը
տանգ մ'ալ ունի : Մինչդեռ Բ. Գու
րս Գարատաղի հետ զբաղեալ է,
կրնայ լինիլ որ միւս կողմէն Հելլենք
օգուտ քաղեն այս չփութութեանէն :
Յունաստանի արտաքին գործոց նա
խարարը տէրութեանց զրկած ծանու
նուցադրերով կը պնդէ թէ աւաղա
կութիւնը զօրացած է Բեռսայիոյ և
Եպիրոսի մէջ, թէ Օսմանեան բարձր
ատիճան պաշտօնատարը հրահանգ
տուցած են Ալպանիական դիմադը
րութիւնը կողմնակրպելու : Վերջա
պէս Արեւելոյ գեղեցիկ երկրներն
ամեն կողմէն զմամբ և խռովութեամբ
վարակեալ են, և հեռի են խաղա

ղութենէ, որ ամեն քաղաքակիրթ եր
կիրներու առաջին պիտոյնն է :

Մեր վերջին երկու թիւերուն մէջ
կարինէն առ մեզ ուղղեալ կարեւոր
թղթակցութիւն մը հրատարակեցինք,
որ այլ և այլ կէտերու վրայ օգտակար
խորհրդածութիւններ կրնայ ներշնչ
չել : Այն թղթակցութիւնը պէտք է
նկատել իւր մի մանրակար կարնոյ
Հայոց ազգին կենաց, ինչպէս որ կը
ներկայանայ ամեն իմաստասէր ուղե
ւորի առջեւ : Կարին՝ ամբողջ Հայաս
տանի ամենակարեւոր քաղաքներէն
մինն է, և յաճախ Օսմանեան Հայաստա
նի մայրաքաղաքը կոչուած է իրա
ւամբ : Այս կարեւորութիւնը շատ
պատճառներ կրնայ ունենալ. — կարին
պատմական, քաղաքական, վարչա
կան, վիճակագրական և առեւտրա
կան տեսակէտներով մեծ իրաւունք
ներ ունի կարեւոր գիրք մը բաւելու
վան, Մուշ, Գարբերդ, Երզնկա և
Բաղէշ, այլ և այլ նկատմաներով կը
նան մրցիլ անոր հետ, բայց պարա
գայ մը կայ և յոյժ կարեւոր պարա
գայ մը, յորում Օսմանեան Հայաս
տանի մայրաքաղաքն անհակառակե
լի գերազանցութիւն մը կ'առնայ Հա
յաստանի բոլոր միւս քաղաքաց վրայ
և որ դոհուլութեամբ յիշատակուելու
արժանի է : Այն է թէ ինչպէս յարգոյ
նամակաղիւրը լաւ կը գիտէ, կարնեցիք
արթնան և գործունեայ են, կարնոյ
Հայք բանիւնն և ճարտար մարտիկ
են, և գործնական առաքելութիւն
ներ ունին, որոցմով չեն պարծիլ, և
որք սակայն ոչ նուազ ընտիր հան
դամանքներ են : Հելլենք ժամանա
կաւ ըսած են թէ երկիր մ'իւր կա
րեւորութիւնն ոչ թէ իւր օգէն և հո
ղէն՝ այլ անոր մէջ բնակող մարդոց
մէջ կայ քաղաք մը, որոյ նկատմամբ
մէջ կայ քաղաք մը, որոյ նկատմամբ
այս խօսքն ամենէն աւելի ճիշդ լինի,
անտարակոյս կարնոյ քաղաքն է :

Նամակաղիւրն հետաքրքրական նը
կարագիր մը տուած էր մեր կարնեցի
ազգայնոց այս հանգամանաց վրայ :
Անգ ազգային գործերն անհատական
գործերու չափի փութով յառաջ կը
տարուին, և ոչ թէ ինչպէս դժբաղ
դաբար կը տեսնուի մայրաքաղաքիս
մէջ, անհատական գործերէ բոլո
րովին տարբեր ոգւով կը կատա
րին : Թէև կարնեցիք ընդհանրա
պէս լաւ կը թուի չեն ըստա
ցած, բայց ազգային գործոց մէջ
միևնոյն գործնական ոգւով կը շար
ժին, որով արդէն նշանաւոր հանդէ
տացած են իրենց անհատական և
առեւտրական գործոց մէջ : Իրաւ է
որ սահմանադրական ոգին փափաք
ուած տպագրութիւնը չէ ըրած տա
կաւին իրենց վրայ : Բայց ժամանակն
այդ ալ կրնայ ընել և երբ հոգն ար

գաւանդ է, լաւ հնձոց յոյս կրնայ լի
նիլ միշտ :

Բայց երբ այդ հոգն՝ անհոգու
թեամբ կամ դիմամբ՝ անմիակ կը
թողուի միշտ, երբ ապագայի մէջ
լաւ հուանք մ'առնենալու համար այժ
մէն բուռական քանակութեամբ սերմ
չը ցանուիր, երբ, միով բանիւ, հո
ղագործութեան տարակալն պայման
ներն ի գործ չեն դրուիր, կրնա՞յ ըս
պատել իւր հոգին արդատաւորու
թիւնն ինքնին որ և է արդիւնք ու
նենայ : Իսկ երբ փերայեալէն դրա
կանի անցնելով, մեր առջեւ կուեն
նամք գործունեայ և բարեմիտ ժողո
վուրդ մը, որ ազգին մէջ իրապէս
օգտակար տարր մը լինելու համար
լաւ առաջնորդութեան և լաւ դաս
տիարակութեան միայն կը կարօտի,
և սակայն այլ և այլ անհոգութեանց,
դժկամակութեանց կամ դաւաճիլի
տուեղութեանց պատճառաւ, տանք
կը զրացուին իրեն, կրնա՞յ ըսել թէ
ազգային յառաջդիմութեան նախա
կան պայմանները կատարուած են :
Ոչ անշուշտ, և սակայն այս ճիշդ տյն
բանն է, յորմէ կը գանգատի նամա
կաղիւրն, երբ կարնոյ Հայոց ազգա
յին վիճակին վրայ կը խօսի : « Ես ա
« մեն պարագայից մէջ ջերմ ազգասի
« րութեան և բարձր անձնութեան
« թեան այս կենդանի օրինակներն և
« անոնց շուրջին համընթաց այս բա
« ղաքի (կարնոյ) նորահաս, այլ իւր
« թերակրթութեամբ միայն փոքր ինչ
« պետական ազնիւ երիտասարդու
« թիւնը տեսնելով, — կրնէ մեր նա
« մակաղիւրն արդար զայրացմամբ մը
« — կը մորմնքիմ : Կ'ըզածուիմ և չեմ
« կրնար իմ որոտաստեքն ու զայրոյթը
« բռնել, և անիմից մեռչիւն մը չար
« ձակել ամեն անոնց դէմ, որք իւր
« կըզբանէ մինչև ցայսօր աշխատած
« են և տակաւին դժոխային մեքենա
« յութիւններով կ'աշխատեն : հայրենի
« հոգին վրայ գործող և զայն ամեն
« վատանդներէ պահող ու պաշտպանող
« այս ազնիւ ու ժիւր ժողովուրդը (կար
« նոյ ժողովուրդը) դեռ ևս խաւարի
« մէջ պահել և լոյսէ զրկել, որպէս
« զի միայն իրենք թագաւորեն » հար
« կէ աւերակաց վրայ . . . »

Իրաց այս վիճակին վրայ խորհե
լով, անհնար է դոհուլութեամբ չընկա
տել առաջնորդական վերջին փոփո
խութիւնն, որ տեղի ունեցաւ ի կա
րին : Ոսմանք դիտողութիւն և միևնո
յիսկ գանգատաւ ըրած էին թէ հրաժար
եալ առաջնորդ Գեր. Տ. Յարութիւն
Արքեպիսկոպոսն, որ քսան տարիէ ի
վեր պաշտօն կը վարէր կարնոյ մէջ,
փափաքուած յառաջդիմական ոգին
չուէր և թէ ոչ ևս յարմար անձ մ'էր
այս փափուկ պաշտօնին համար : Ն.
Արքեպիսկոպոսն ապաստաւոր եղող ու
րիշ անձինք ալ կ'առաքելէին թէ ու
մանց կողմանէ արդէն իրենք կը հան

ուին Գեր. Յարութիւն Սրբազանի
գովելի խորհրդոյ գործադրու-
թեան գէտ. Ս. յայտն, մինչդեռ եր-
կար ժամանակէ ի վեր այս վէճերն
ու գտնականները կը շարունակէին,
կարնոյ մէջ ազդեցիկ յառաջդիմու-
թիւնը դադարեալ վիճակի մէջ կը
մնար: Բայց այժմ, առաջնորդին յո-
ժար մամ հրաժարմամբ, այս գրո-
տութեանց համար ամեն պատրուակ
մէջ անդէն կը վերնայ, և կարնոյ յա-
ռաջդիմութիւն տարրը լաւ ասպարէզ
մը կուենանայ իւր առջեւ: Ն. Սրբազ-
նութեան յաջորդին հետ գործակցու-
թեամբ աշխատելու:

Մեր մեծ կարեւորութիւն կու-
տամբ՝ առաջնորդական պաշտօննե-
րուն, մանաւանդ Հայաստանի գա-
ւառաց առաջնորդութիւններուն:
Այնպիսի տեղեր, ուր ժողովուրդը
ազատ և տկար է միանգամայն, լու-
սամիտ, բանիւրուն և ազդուէր ա-
ռաջնորդ մ'երկնային բարեք մ'է:
Հին ժողովուրդին իւր առաջնորդին
միայն կը նային. նա է որ այդ ժողո-
վուրդը պիտի պաշտպանէ պաշտօնա-
կան և ոչ-պաշտօնական հարստահա-
րութեանց և կեղեքմանց դէմ. նա
է որ անոր պիտի առաջնորդէ հակա-
ռակ շահուց լաւիւրներուն մէջ.
Նա է որ յայտն և լոյս, միմիւր բանիւ
կեանք պիտի տայ ժողովուրդին: Ա-
ռաջնորդն ամեն ինչ է գաւառացւոց
համար. առաջնորդաց զօրութիւնն
ու ազդեցութիւնը տակաւին յոյժ
մեծ է: Հակառակ ուսմանագրական
տրամադրութեանց, որք գաւառա-
կան ժողովուրդեան ալ բաժին մը կու-
տան տեղական ազդեցիկ գործոց վար-
չութեան մէջ: Բայց քանի որ, ինչ-
պէս ըսինք, ժողովուրդը ազատ է
և տկար, այդ սահմանադրական տը-
րամադրութեանց իկրաւութեանէն
փախուցուած արդիւնքը չգոյանար,
և միշտ գաւառական յառաջդիմու-
թեան գործին մէջ՝ կարեւոր բաժին
մը հանել պէտք կը լինի առաջնոր-
դական նախաձեռնութեան ու գոր-
ծունէութեան:

Այժմ՝ կարնեցւոյ գրեթէ միաձայն
քուէիւ՝ Գեր. Յարութիւն Սրբազանին
կը յաջորդէ Գեր. Տ. Մարգարէտ Ծ,
վարդապետ Օրմանեան, ազդէն ամե-
նէն աւելի յուսատու եկեղեցական
ներէն մին, Տակաւին վեց ամիս ա-
ռաջ, ազդեցիկ զգացումը մեծ յե-
ղոփախութիւն մը յառաջ բերած էր
այս վարդապետին վրայ, և կը սիրեմք
յուսալ թէ ինք այդ հոգին պիտի
պահէ մինչև իւր վերջին շունչը: Կար-
նեցիք ալ անշուշտ այդ յայտն ունե-
լին, երբ զայն առաջնորդ ընտրե-
ցին իրենց, և կարնոյ Հայ առաջնորդ-
մը, մանաւանդ ներկայ պարագայից
մէջ, ծանր և փափուկ պարտակա-
նութիւններ ունի իւր վրայ: Կարնոյ
դաշտը, Բաթն և Ալաշկերտ մինչև
Պայազիտ, բացառելի վիճակի մը մէջ
են այժմ, որ գաւառին հոգեւոր գըլ-
խոյն աշտուրջ հոգածութեան առար-
կայ պէտք է լինի: Մահու և կենաց
խնդիր մ'է որ կը յուսուի այժմ այդ
կողմերն, և Գեր. Յարութիւն Սրբազա-
նի յաջորդը մեծ ազդեցութեան մը
հետ մեծ ազդեցութիւն ու գործու-
նէութիւն պարտի ցուցնել տեղական
վիճակին պիտի զարման տանելու
համար: Ասկէց զատ, մնայուն պէտ-
քեր կան, զորս գոհացնելու համար
կարնոյ առաջնորդին իւր բոլոր ուժով
աշխատել պարտի: Դաստիարակու-
թեան նոր թուի մը պէտք է տալ
Բաթն Հայոց մէջ, և կարնոյ այս նը-
կատմամբ մեծ պաշտօն մ'ունի կա-
տարելիք: Մերարեկարգ վիճակ մը,
որոյ մասին ինչ ինչ ցաւալի մանրա-
մասնութիւններ տուած էր նաև մեր
յարդոյ թղթակիցը, զանազան ան-

պատեհութիւններ յառաջ կը բերէ,
որոց գարման տանի պէտք է շտապ
առաջնորդը՝ տեղական ազդեցիկ Ժո-
ղովոյ խորհրդակցութեամբ, որք
անշուշտ իրենց փութեան օժանդա-
կութիւնը չպիտի զանան իրեն: Երբ
բոլոր այս պարագայներն յուշ ա-
ծեմք, կրնայ խնդիր մը լինի թէ նո-
րնաիր առաջնորդը պէտք եղած
փորձառութիւնն ունի՝ այս պաշտօ-
նին համար: Բայց միւս կողմէ, երբ
իսկապէս առաւելու Գեր. Օրմանեանի
այն մտաւոր և բնական ձիրքերն,
որք ապագային մէջ անշուշտ կարե-
ւոր տեղ մը կը սահմանեն իրեն, գէթ
սա՛ միտաւորութիւնը կ'ունենամք թէ
կարնոյ պատուաւոր և լուսամիտ ազ-
գայնոց աջակցութեամբ՝ նոր առաջ-
նորդը պիտի յաջողի նոր կեանք մը
տալ Հայաստանի մայրաքաղաքին:

Թէ ազդեցիկ և բանիւրուն առաջ-
նորդ մը, թէ և նոր, ինչիւր կրնայ ը-
նել քիչ ժամանակի մէջ, վերջերս ա-
սոր մէջ գործնական օրինակը տես-
նուեցաւ յերջանայ, և ուրիշ կարե-
ւոր քաղաք բարձր Հայոց: Մեզ նո-
րնաիր առաջնորդը, Գեր. Տ. Հը-
մայեակ Ծ. Վարդապետ Գրիգորեան,
մի քանի ամսուան մէջ յաջողեցաւ
փրկարար եռանդ մ'արձարձել Երզն-
կայի Հայոց մէջ, որոց օժանդակու-
թեամբ նոր գաղութներ հաստատեց,
կեցած գաղութները բարենորոգեց,
չըմալայ գիւղերու մէջ ալ ուսման
ըլլը տարածելու գովելի սկզբնառ-
ութիւնն մ'ըրաւ, և իւր գործունէ-
ութեամբ ազդեցութեամբ և լու-
սամիտութեամբ բողոքովն նոր կեանք
տուաւ Երզնկայի գաւառին Հայ ժողո-
վուրդին: Առնուած տեղեկութեանց
նայելով, ոչ նուազ հոգածութիւն կը
ցուցնէ նաև իւր ինքնաց յանձնուած
նիւթական շահուց պաշտպանութեան
մէջ, որով մի անգամ ևս հաստա-
տութիւն կը գտնէ սա ճշմարտու-
թիւնը թէ առաջնորդ մը կրնայ գոր-
ծի մարդ և միանգամայն դպրոցա-
սէր և ուսումնասէր լինիլ. այսինքն,
իւր իրաւասութեան ներքեւ գտնը-
ւող վիճակին ընթացիկ գործերը տը-
նօրինելով և ազդէն նիւթական և
անհատական շահերը պաշտպանելով
հանդերձ, նոյն գաւառին մէջ գըպ-
րոցաց յառաջդիմութեան և ժողո-
վուրդին լուսաւորման ալ աշխատել:
Մինչև ցարդ, մեծ գոհութեամբ կը
տեսնեմք թէ Գեր. Հմայեակ վար-
դապետ այս կրկին հանգամանք-
ները ցուցած է, և ամեն անոց
հետ, որք մասնաւոր կարեւորութիւն
կուտան մեր Հայաստանից ազգայն-
ոց յառաջդիմութեան, մեք ալ կը
սիրեմք հաւատալ թէ Երզնկայի ա-
ռաջնորդն այսուհետեւ ալ միեւնոյն
ընթացից մէջ պիտի յարստե՛ն՝ ի
մեծ օգուտ իւր ինքնաց յանձնուած
ընդարձակ գաւառին ազգայնոց, և
ի քաջալերութիւն իւր ուրիշ աշա-
տօնակցաց, որք գոհազգաւար նոյն-
քան եռանդ չեն ցուցներ իրենց կա-
րեւոր պաշտօնին մէջ:

Այսպէս, քանի որ խօսքն Երզն-
կայի վրայ է, անոր քիչ շատ յա-
ռաջդիմական ճանաչում մէջ մտնելը
պարզապէս առաջնորդական փոփո-
խութեան մը հետեւանք կը լինի: Ա-
մեն անոք, որք երկու տարի առաջ
Երզնկայի վիճակը գիտէին, լաւ կը
հասկնան զայս ուրեմն՝ պատճառ մը
չկայ որ կարնոյ համար ալ այնպէս
չլինի, և Երզնկայ առաջնորդական
փոփոխութեան բարեք չնի կար-
նեցւոյ համար:

Մտադիր եմք ուրիշ առթիւ ևս
խօսիլ այս խնդրոց վրայ, ըստ որում
նոցա կարեւորութիւնն ակնհայտ է մեր
գաւառաբնակ ազգայնոց յառաջդի-
մութեան տեսակետով: Ներկայ յոդ-

ուածը գրելով մեր գլխաւոր նպա-
տակն եղած է կարնոյ Հայերը քաջա-
լերել՝ ազգային վիճակին բարու-
ման համար իրենց ըրած ջանից մէջ:
Կը յուսամք որ այսուհետեւ իրենց
ջանքերն աւելի արդիւնաւոր պիտի
լինին, և մանաւանդ, ազգային շա-
հն անհատական շահէն վեր բռնե-
լով, իրենք իսկ պիտի աշխատին որ
այդպէս լինի: Նայեալէս, վստահ եմք
որ այսուհետեւ կարնոյ մէջ առաջնորդ-
և ժողովուրդ համաձայնութեամբ և
միեւնոյն եռանդով պիտի գործեն ընդ-
հանուր բարոյն համար: Մանաւանդ
ներկայ պարագայից մէջ, սարսափե-
լի սովու մը տառապանոց առջեւ,
կարնոյ Հայք իրենց ազգապիտան
զգացմանքն և իրենց գործունէա-
լիւնն օգտակարապէս ի հանդէս ա-
ծելու համար գործադրութեան ըն-
դարձակ տապարէզ մ'ունին, և տա-
րակոյ չկայ որ ներկայ վիճակին պի-
տից համեմատ գործելու մասին բը-
նաւ անհոգ կամ թոյլ չպիտի գըտ-
նուին: Հայաստանի յառաջդիմու-
թեան վրայ խօսելով, անհնար է ան-
միջապէս յուշ չաճել այն կարեւոր
գերը զոր կարին կոչուած է խաղալ
այդ գործին մէջ, և ազգային վեր-
կութեան սիրոյն համար, պէտք է
յուսալ թէ կարնոյ Հայք պիտի կա-
տարեն այդ գերը:

ՀՆՈՍԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս առաւել հասած հետեւէ:

Լոնտոն 30 ապրիլ.
Լորտ Գարիկիֆօրտ յանձն չառաւ
Կ. Պօլոյ գեղականութիւնն, որ իրեն ա-
ռաջարկուած էր:

Նահօր 29 ապրիլ.

Ապտիւլ-Բահման խան՝ Կոնստնտնուպոլիս
Անդղիական զօրաց կողմէ Աֆգանաց կը-
րած պարտութեան վրայ՝ Անդղիացի
հրամանատարին նամակ մը գրից, յո-
րում կը յայտարարէ թէ պարտաւոր է
հնազանդիլ Անդղիոյ:

Հոմ 30 ապրիլ.

Խաղաղական նախարարութիւնն հըրա-
ժարական տուաւ:

Մի քանի քաղաքներ երեսփոխանաց Ժո-
ղովին լուծումը կը խնդրեն:

Բեդրասուրի 50 ապրիլ.

Ռուսիոյ կայսրուհւոյն վիճակը ծան-
րացաւ:

Գահիրէ 29 ապրիլ.

Եգիպտական կառավարութիւնը տէ-
րութեանց առաջնորդից տուր մը հա-
տատել Սիէէի Զրաքցէն անցնող նա-
ւերուն վրայ:

Աթէնք 30 ապրիլ.

Երեսփոխանաց Ժողովը տակաւին չը-
քնուած երմոսցիներուն ամենն ալ
քուէարկեց երէկ: Յետոյ, ծախուց վե-
րաբերեալ ընդհանուր օրէնքը քուէար-
կեց: Հետեւաբար, Առաջին նախարար
Պ. Քրիզուելիս արքունական հրամանա-
գիրը կարգաց, որ երեսփոխանաց Ժո-
ղովը կը փակէ:

Լոնտոն 30 ապրիլ.

Օտ. Գոնս.	10	3/8
Գոնս.	4865	41 3/4
»	4869	11 1/4
»	4871	71
»	4872	48 1/4
»	4873	40 3/4
»	Եգիպտ.	89 1/4
Անգլ. Գոնս.	99	1/8

Փարիզ 30 ապրիլ.

Երկաթուղի	10,70	
»	36,—	
Գաղղ.	80,00	119,55
»	30/0 Նոր	85,82 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թուրք լրագիրք Հայաստանի և
Գրգաստանի սովուն նկատմամբ վա-
նայ, Կարնոյ և Սեբաստիոյ կուսա-
կալներէն Բ. Դուռն եկած հեռագրեր
կը հրատարակեն:

Վանայ կուսակալն Ապրիլ 8/20
Թուով կը ծանուցանէ թէ Հէքքեա-

րիի Սանճագին կառավարին 9,600
գրիւ (քիլո) ցորեն խնդրած էր, որոց
5,800 գրիւը դրկելու համար միջոց-
ներ ձեռք առնուած են. իսկ մնա-
յածը Մուշէն դալիք ցորենէն պիտի
հայթայթուի:

Քրիստոնեայ և Խալամ անհատից
կողմէ խնամուող աղքատներէ զատ,
վան քաղաքը ձրիաբար տան երկու
հազարէ աւելի աղքատ կը պարու-
նակէ «յատուկ յանձնակմբին տու-
մարներուն վրայ արձանագրեալ»:
Տասնորդաւորոց հասոյթէն կառա-
վարութեան համարաց մէջ գտնուող
արմուքէն ամեն օր ուտեստ կը տըր-
ուի սանց: Տեղական կառավարու-
թիւնը Կ. Պօլոյ) մէկ գրիւ ցո-
րենն երաւուն դրուչի կը ծախէ այս
մարդոց, և նկատելով որ անցեալ տա-
րի քան զընդէս էր, կը կարծէ թէ
ներկայ սովուն ժամանակ կառավա-
րական մեծ զոհողութիւն մ'է այս:
Սակայն, կրնամք գիտել մեք ալ թէ,
անցեալ տարի Մէթալիք ընդունիլ
կարելի լինելուն պատճառաւ, այս
տարի մի և նոյն գրիւը 20 զրուշի
տեղ 60 զրուշի ծախուած կը լինի
տեղական կառավարութեան կողմէ:

Վանայ կուսակալը կը գանդատի
թէ «մինչդեռ տեղոյն քրիստոնեայ
սովիւրց համար Կ. Պօլոյն, Տիփսիսէն
և ուրիշ քաղաքներէ հասած զընա-
մական օգնութիւնը մինչև ցարդ վեց
հազար ոսկին կանցնին, վանայ Խա-
լամ բնակիչք մի միայն պաշտօնատա-
րաց և բնիկ ժողովուրդեան գըթու-
թեան դիմելու պարտաւորեալ են:
Երկու ամիս առաջ վանայ մէջ պաշ-
տօնատարաց միջոցաւ 40 հազար զը-
րուշի հանգանակութիւն մ'եղած էր,
և անկէ ի վեր բնաւ օգնութիւն չե-
ղաւ այս թշուառ Խալամայ»:

Թէ և, ինչպէս կը հասկցուի վա-
նայ կուսակալին այս խօսքերէս, եր-
կու ամիս առաջ հաւաքեալ այդ
40 հազար զրուշին բնաւ օգնութիւն
չէ եղած վանայ քրիստոնէից, այսու-
ամենայնիւ, տեղոյն Հայկական յանձ-
նախու մին անկէ ի վեր թիւքաց և Բըր-
դաց ալ նպատակ քաշնելէ չէ դադ-
րած: Տարակոյ չկայ որ վանայ կու-
սակալին դանդաւան ուղղեալ է Կ.
Պօլոյ և ալ Օսմանեան կարեւոր քա-
ղաքաց Խալամ բնակիչներուն, որք
մինչև ցարդ ամենին հանգանակու-
թեան չձեռնարկեցին և ստակ մը չը
դրկեցին վան, Տիարպէքի, Հէք-
եարի, Սեբրդ և Մուսուլ, ուր քը-
րիստոնէից չափ Խալամը ալ կը տա-
ռապին սարսափելի սովէ մը:

Կուսակալը կը ծանուցանէ նաև թէ
վանայ գիւղերից և Մոսկի և Շա-
տախու վիճակաց բնակիչներուն քիչ
մը ցորեն կըցած է տրուել, բայց
յարմար տնօրէնութիւն մը կարենալ
ընելու համար՝ Մուշէն գալիք ցորե-
նին սպասել հարկէ: Վանայ կուսա-
կալին այս հեռագրէն կը հասկնամք
թէ իւր բոլոր յոյժը Մշոյ գաւառէն
երկելիք ցորենին վրայ է. իսկ Բա-
ղիշու խօսքը բնաւ չկայ, թէպէտ
այս քաղաքն երբ օր աւելի մօտ է
վանայ, և ինչպէս վանայ Հայկական
վարչութիւնը քանիցս ծանուցած,
հին առատ ցորեն կը գտնուի թէ և
Բիւրդ շահագրկտաց ձեռք:

Կարնոյ կուսակալն ապրիլ 13/23
Թիւ հեռագրով մը կը ծանուցանէ թէ
տեղական աղքատ ժողովուրդին 430 սո-
մար ցորեն տրուած է՝ հնձոց ժամա-
նակ գինն ստանալու պայմանաւ: Մէկ
սոմարն 250 օխայ է:

Ապրիլ 6/18 Թուով և կարգէ
դուրս արագութեամբ Սեբաստիոյ
կուսակալին կողմէն եկած հեռագրէ
մ'ալ կը ծանուցանէ թէ ութերորդ

անգամ լինելով նոյն օրը, այսինքն ասիէ երկու շաբաթ առաջ, 17,000 օխայ ցորեն զրկուած է դարձեալ Տիարաքէքի ուր մինչև ցարդ 147,000 օխայ ցորեն զրկուած է Սերապուստայէն: Իսկ վանային զրկուած է տա- կաւին:

Ինչպէս արդէն ծանուցինք, մայ- յաբարգաքիս դեռ պահանջան մտրմանը, դուրսի մարդասիրութեամբ յառա- ջիկայ երկուշաբթի օրը Գերմանա- կան դեռ պահանջան մէջ մեծ նուա- գահանդէս մը պիտի տայ ի նպատակ Մատթիոսի սովելոյց, և մեք արժա- նահաւատ աղբիւրէ կ'իմանամ թէ դեռ պահանջան մտրման Հայաստանի սովելոյց ալ մեծ բաժին պիտի հանէ այդ գովելի ձեռնարկութեան հա- սոյթէն: Ուստի, կը յուսամք որ կա- ռող աղբայինք պիտի փութան մաս- նակցիլ այս գործին, և իրենց ներ- կայութեամբ օտարապետաց առջև պիտի ապացուցանեն այն համակրու- թիւնը զոր ունին այս սարսափելի աղետէն տառապող մեր աղքատաց վրայ:

Վաղթի կը ծանուցանէ թէ, Սէ- պանիայէն առնուած տեղեկութեանց նախելով, Միւսթիմեներն ալ Սէպանի- ապոց հետ միացելու են Գարապա- յուոյ յառաջացման դիմագրելու հա- մար:

200 Մովսիսի զինուորք այս օրերս մայրաքաղաքէն իրենց հայրենիքը զրկուեցան:

Տեղական լրագիրք ոմանք կը ծա- նուցանեն թէ Մատթիոսի սովէն փախուելու համար բազմաթիւ թըշ- ուառ ընտանիքներ, մանաւանդ կա- նայք և մանկունք, այս շաբթու ա- ռադատուոր շողենաւերով Սե- ծովու Սիսական եղերքէն մայրաքա- ղաքըս եկած են:

Ըստ Վաղթի, մինչև ցարդ Սըր Հէնրի Լէյքըս Լանարայէն որ և է պաշտօնական լուր չէ ստացած իւր պաշտօնավարութեան կամ յաջորդին նկատմամբ:

Պատերազմական նախարարու- թիւնըն հինգշաբթի օրն հեծելազո- լաց գունդ մը զրկեց Չմիւսնիս:

Փարսի Պոսթոր լրագիրն՝ ա- ռանց ստուգութեան երաշխաւորե- լու կը ծանուցանէ իւր երէկուան թը- ռով թէ համաճարակ հիւանդու- թիւնք ծագած են փոքր-Սիսիոյ այն այն տեղերն, ուր սաստիկ սով կը տիրէ:

Մարտի խառն կառավարութեան հպատակ ոչ-խառնաց պաշտպանու- թեան խնդիրը բուական կըրողեցնէ երաշխական կառավարութիւններն, և վերջին լրոյց նայելով, յիշեալ կա- ռավարութիւնք սկսած են արդէն իրենց պատուիրակներն անուանել ի Մատրիս գումարուելիք դեռ պահա- խորհրդին համար, որ յատկապէս այս խնդրով պիտի ղեկավարէ:

Առանցիկ նահանգին մէջ մարախ- ներուն գործած տեղամեներն ար- միտեաց նուազութիւն պատճառելով կառավարութիւնն արդեց մինչև մա- յիսի վերջն Սէպանիոյ նաւահանգիստէն ներս մանկիւք արմատիքն մարա- տուրք չառնուլ:

Նիկիոյ իրաւունց ասլիլ 16 թուով հետեւեալը կը գրեն մեզ.

Ներքէ կը քաղաքի ըրադաքին մէջ հետեւեալ ծանր դէպքը տեղի ունեցաւ, բայց բարեբաղդաւոր շուտով առաջին անուեցաւ տեղա- կան իշխանութեան աշարքութեան շնորհիւ:

Տեղէն և-3 ժամ հեռաւորու- թեամբ Ուլա-Բուլաք ըստած կող- մը բնակութիւն հաստատող սովա- տանը Չերքէնքերէն 23 անձինք կա- ռավարութեան դիմելով իրենց նո- թութիւնը կը յայտնեն և անպաղաղ դարման և օգնութիւն կը ընդգրեն: Առաջին անգամ փորձ մը կը ար- ցա խնդիրը մերժելու պատուէր տրուելով որ երթան և աշխատու-

թեամբ իրենց աւուր պարէնն հայ- թայթին: Բայց երբ յետոյ տղապա- կը կը բարձրանայ և բազմութիւնը չաղեր ցրուել, կառավարութիւնը 20-25 զրկու եղիպտացորենով դոճ ըլ- լալ, զոր կը խոստանայ կառավարու- թիւնն անմիջապէս շնորհել նոցա: Չերքէնք կը պատասխանեն թէ՛ ան- բուական է այդ, և բարձրագոյն ա- ղադակաւ իրենց կրած տառապանքը կը յայտնեն վերադառնալ: Անոց մէ մին յանդգնութեան չափն անդունելով անմիջապէս կը բանադրուի: Բայց խռնեալ բազմութիւնն իրենց ընկե- թին աղաւթութիւնը շուտով ձեռք բե- ռել կը յաջողի Հոսի ուրիմն կառա- վարութիւնը տեսնելով որ մեղմու- թեամբ դանձր հեռացուել անհը- նար է, ունանց վրայ գտնուած գէն- քերն առնելով բռնութեամբ կը ցրուէ զիրենք:

Սէյս ցոյցը կառավարութեան պաշտառն առջև վերջնապէս յետոյ Չերքէնք կը մեկնին անկէջ և նոյն բազմութեամբ շուկայ դարձել և ի- թենց անցնելու ծանրուն վրայի մէկ փոսն վրայ յարձակելով յախուռն կերպիւր կ'սկսին հացերն յախըշտա- կել, դիմադրողներն հարուածել և վախազարձաբար:

Սէյս անկարգութիւնը որ երե- կոյեան ժամ 10 1/2ին տեղի ունե- ցաւ, սոսի մը կը շարունակի մինչև որ ոստիկանութեան փոքրաթիւ զին- ւորներն հասնելով Չերքէնքերէն 17-18 հազիկ կը ձերբակալեն քաղա- քացւոյ օժանդակութեամբ: Իսկ մը- նացածներն կը յաջողին խոյս տալ և բարեկարգութիւնը կը վերահաս- տատուի:

Չերքէնքեալ Չերքէնք կը բան- տարկուին՝ քննութիւն և դատատան կատարուելով ըստ օրինի պատժը- լելու համար:

Վիսմ Միւթեարըքի պէյի նա- խագահութեամբ ժողով կազմուե- լով՝ քաղաքիս ապահովութեան հա- մար միջոցներ ձեռք կ'առնուին, և լրածիւնայելով Միւթեարըքի ֆէյ- ղի պէյ այս առաջին անգամ՝ տեղի ունեցող ծանր դէպքը ի Ղըմիս հե- ռադբաւ ծանուցանելով 1000 զին- ւոր խնդրել է կայսերական կառա- վարութիւնէն՝ փախուած ապաղայ պատահականութեանց նկատմամբ պատրաստ դանուելու համար:

Սէյսի 13ին կիրակի լուսնալու- գիւրը Հայ կաշիկարի մը խանութը գողեր մտնելով՝ 3-4000 դրուշի տա- լանք վերցուցեր են: Գողերն ու գո- ղանները տակաւին գտնուած չեն:

ԿՈՍՏԱՆՅՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԵՆՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրկուած գողութեան	41.11
Այս առաւոյ քաղաքեաց	41.11
Կէս օրին	41.11
Բաւոյի երկաթուղի	Փր. 34 1 2
Թոյլ աղբար	Իր. 1065
Թրամուայ	Կա. Իր. 350
ԸՆԴՈՒՅՔ ՈՐԴՈՒՄԻՍ	
15 Ապրիլ	
Պատի թէ ձեռնարկութեան	Աղ. Գ. Իր. 4.1
• փոխանակութեան	3.5
Կ. Պոստի Պոստային	6 16
Քրէտի ձեռնարկ	3 25
Իր. 1863	Փր. 55
• 1865	• 55 50
• 1869	• 55
• 1872	• 18
• 1873	• 51 50

ԸՆԴՈՒՅՔ ԴՐԱՄՈՅ	
16 Ապրիլ	
Աղ. Գ. Իր. 14	410 14
Կարօյն տակի	88 8
Խիւսիսի Բուս	90 6
Ռուսական թղթագրութ	8 րդ. 55 քարիք
Դրամից	զր. 51 20
Միւսթիմեի տարբերութիւն	7
Զինացի	203
Միւսթիմե	210
Պրիմ	560
5 Կարանոց	330

Ա. Գ. Ս. Ս. Ս.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԻ

Գրիտուսի Ս. Յարութեան տունն Ամեն Ս. Պատրիարք Հօր պաշտօնա- պէս շնորհակալութեամբ համար, փարչա- կան ժողովոյ և խորհրդոյ դիւան- ները Պատիկն երկրորդ օրը ժամը ճիշդ 6 1/2ին Պատրիարքարան հըրա- յիրեալ լինելով, այն հանդիսաւոր

ներկայացման մասնակցելու փափա- քող երեւոյթանք և այլ ժողովա- կանք ալ իրենան նոյն ժաման ներկայ գտնուիլ:

Ստամբուլի թաղ. Խորհուրդը շը- նորհակալութեամբ կը ծանուցանէ թէ Յարութեան Սեծ. Միւսթիմե Գեշ- արին ըստ ամենամեայ սովորութեան՝ այս Զատիկ տօնին առթիւ ալ մէկ մէկ ձեռք դէպք չլինած է Ստամ- Թիոյ, Նարը-Գարուի և Եշէն-մա- հալլէի աղքատ մանկանց:

Զմիւռնիոյ Սըշալոյս Արարատեան լրագրին մէջ գոհութեամբ կը կար- գամք թէ Զմիւռնացի ուսումնասէր և պատուաւոր աղջկայինք ոմանք Ա- սիական Թուրքիոյ Հայոց մտաւորա- կան զարգացման համար թէ ի Կ. Պո- լիս և թէ այլուր եղած ջանքերէն խրախուսուելով, « Սիւնեայ Ընկե- րութիւն» անուամբ ընկերութիւն մը հաստատած են՝ այն գործին նպաս- տելու գովելի նպատակաւ: Գործա- դիր մասնագործներն անդամներն են. Մեծ Պօղոս Կոստանդեան Արեւադ, « Յակոբ Վէմեան, Արեւադ, « Դուկաս Եսայեան, Գաւառ, « Յովհաննէս Չարբեան, « Յովհաննէս Մարտաթօ, « Ռուբէն Խ. Աղապարեան Ընկերութեան ընդհանուր Ժողո- վին դիւանն ալ այս անձերէն բաղ- կացեալ է.

Արեւադ Պ. Մ. Ալիբեկեան
Փիւ-Արեւադ Գ. Յ. Փափաղեան
Արեւադ Գրիգոր Չիլիկիբեան
Փիւ-Արեւադ Գ. Պոպուլ

Ընկերութեան կանոնադրին ի մե- տոյ պիտի հրատարակի:

Այգային եկեղեցական քառէն խաղիւղի հանրամասնութ Արթ. Տ. Երեմիա Աւագ Գահանայն այս գի- շեր իւր մահկանացուն կնքեց, և վաղը կ'իրակի՝ օժման և յաղարկա-ւորութեան հանդէսը պիտի կատա- ը խաղիւղի Ս. Ստեփաննոս եկե- ղեցին:

ԱՐԱՋԱՐԿ

Խոշոր Հայտարարութեան

... Տէր.

Լրագիրներէ շատեր, ընդ որս և զուր մասնաւորապէս, կը հրատարակեն թէ Սովետաց Կեդրոնական Մասնագործն մինչ ցարդ դեռ 10 000 ոսկեայ չափ կըր- ցած է հաւաքել, զորս արդէն սովեալ գաւառներն զրկած ըլլալով, իւր արկըն այժմ գրեթէ դատարկ է. միանգամայն կը հաշուեն թէ սովուն առաջն ըստ ա- մենայնի տեղերու համար տակաւին 40, 000 ոսկեայ անհրաժեշտ կարօտութիւն կայ: Ինչպէս շատեր ըսին արդէն, մեծ շարեաց դարման տանելու համար մեծա- մեծ զոհողութիւնը հարկաւոր են: Այդ 40,000 ոսկին ձեռք բերելու մասին ա- մեն աղջկային իւր դիտցած միջոցն հը- րապարակաւ առաջարկելու պէտք չէ դանդաղի. առի սրբազան պարտաւորու- թիւն մը կը համարուի ես, զի խնդիրը կենաց և մահու խնդիր է: Իմ մասին, կուգամ մի առաջարկ ներկայացնել, առ- որ յարգոյ հատարակութեան, մասնա-ւանդ պատուարժան Թաղ. Խորհրդոց ու- շաղթութիւնը կը հրաւիրեմ խանարհա- րար: Աւագ շարժումն մէջ կը գտնը- ուիլը: Ես այն է թէ ամբողջ տարուան մէջ այս շարժումն է միայն յորում ամեն օրեքն աւելի հասոյթ կուենան եկեղե- ցիք՝ բարեպաշտ ժողովուրդեան պնդելը, բանկալը եւ այլն ձգած ստակներէն: Կար- ծեմք, եթէ Պօղոս բոլոր եկեղեցեաց մէջ Աւագ շարժումն դրայցած՝ հասոյթներն ի մի գումարուին, բուական մեծ գու- մար մը կուենամք պատրաստ, որ կրնայ սովետաց համար հարկ եղած գումարին նպատակ: Պէտք է որքան որ համայն Թաղ. Խորհուրդը հրաժարին այս տարի՝ Զատիկական տօնի սովեալ գողանալը դու-

մարն ի փառս եկեղեցեաց ընդունել, և զայնս մտղջապէս Հայաստանի սովորուե- լեքազնէյ յատկացնեն: Կարծեմք ժողո- վրդեան ստակն աւելի բարեւոյ գոր- ծածութեան մը չլինար նուիրել: Թո՛ղ այս տարի ալ եկեղեցիք նուազ պայծա-ւանան, և փոխարէն, անդին, մեր թը- շուառ հայրենեաց մէջ, հաղարտուր սովե- եակներ մահուան անադորոյն ճիրանե- ընէ փրկուին:

Կը յաւելում որ եթէ առաջարկու- թիւնս ընդունելի լինի, Գերապապու- Քարաղիք լաւ կընեն եթէ եկեղեցեաց բնակն ծանուցանեն ժողովրդեան թէ ինչ նպատակի պիտի գործածուի իրենց յեկեղեցին ձգելը ստակը: Հարկ չէ ը-սել որ դոյանալիք դուստրն յայնժամ ա-ւելի մեծ կը լինի:

Խնդրելով, Խմբագրապետ Տէր, որ բարեհաճիք ներկայս Ձեր այսօրեայ թերթ- թին մէջ հրատարակի,

Մնամ խորին յարգանք
1880 Ապրիլ 18 Յ. Գ. Փ.

15 Ապրիլ 1880

... Խմբագիր.

Հետեւեալ Մեծապապու նուիրա- տու աղջկայինք, ըստ իւրեանց բա- րենպատակ սովորութեան՝ Ս. Զատիկ տօնին առթիւ միմեանց այցելութիւն լաւագոյն ազատ մնաւ համար, այս տարի ալ հաճեցան Աղգ. Հիւանդա- նոցի խոճալեաց մէյմէկ նուէր շնոր- հել, որոց համար Հաղարարութեան խորին շնորհակալիքը կուգամ հըրա- պարակաւ յայտնել:

Գործակալ Աղգ. Հիւանդանոցի Ս. Ս. Հիւանդանոցի

Գրասեն. Աղգ. Հիւ. Մեծ-Նոր-խան

Գումար նախորդ Ա. հրատա- րակութենէ զըսշ 1057

Մէծ. 20 զըշէն

Մեծ. Եֆէնտիք	
Գ. Շէֆահիրեան	20
Տ. Գարակէօղեան	20
Մարտիրոս Հարենց	20
Տիգրան Մ. Խափամաճեան	100
Թորոս Կիւլպէնկեան	20
Միհրան Մեղակի	25
Սահակ Ղազարոսեան	20
Խաչիկ Կամարալեան	20
Կարապետ Խնձիճեան	20
Բարեմէր ոմն	30
Մանուկ Արղբեան	20
Գրիգոր Յ. Նաքաշեան	20
Գարութիւն Գընտճեան	20
Գրիգոր Կիւլպէնկեան	54
Թովհաննէս Պետրոսեան	20
Եղիա Շահապալ	50
Ապտուլահեան Եղարք	418
Մարգար Գումարաղբեան	20
Միմն պէյ Պալեան	20
Աւետիս Հարենց	20
Բ. և Ե. Մատիկեան	20
Արէլ Կիւլպէնկեան	20
Ստեփան ֆէշտմաճեան	108
Նշան Հարենց	54
Կարապետ Պատմաճեան	27
Նշան Գարապալ	20
Պօղոս Գըլըճեան	20

1883

ԴԻՏՈՂԱԹԻՒՆ

Իմաց կը արուի մեզ, թէ երեք- շաբթի աւուր Մատիսի մէջ հրատա- րակեալ Գեր. Հատունանի նամակին 17րդ տողին մէջ՝ ընդօրինակչաց սը- խալմամբ քանի մը բառեր դուրս թողուր են, որք հետեւեալ կերպիւ պէտք է լրացնեն այն պարբերութե- նըն. « նպատաւորեալ ժողովրդոց «երախտադէտ զղացմանց հետ» հարկ «գատեցինք ձեր միջնորդութեամբ «հաղարդել խնամարկու յանձնաժո- «ղովրդը Մեծապապու անդամաց, և «ձեռնարկելու վնսմ գործոց ... »

ԽՄԲԱԳ.ԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ